ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Աշոտի Սալնազարյանի «Դեպոզիտարային ծառայությունների զարգացման ուղիները ՀՀ ֆինանսական շուկայում (Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի նյութերով)» թեմայով, Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տնտեսական զարգացման ներկա պայմաններում ցանկացած երկրի զարգացման և կայուն աճի ապահովման գործում ֆինանսական շուկան և հատկապես կապիտալի շուկան առանձահատուկ նշանակություն ունեն: Իր հերթին, նշված շուկաների արդյունավետությունն էապես կախված է հետառևտրային ենթակառուցվածքների և, մասնավորապես՝ կենտրոնական դեպոզիտարիայի լիարժեք գործողությունից:

Ֆինանսական շուկաներում արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիաները (ԱԿԴ), որպես կարևորագույն ինստիտուցիոնալ կառույցներ, ներդրողներին մատուցում են ինչպես արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումն ապահովող, այնպես էլ արժեթղթերի քլիրինգի ու վերջնահաշվարկի ծառայություններ: Նշված կառույցների արդյունավետ գործողության նկատմամբ շատ մեծ է նաև միջազգային կազմակերպությունների հետաքրքրվածությունը: Դեպոզիտարային ծառայությունների կազմակերպման խնդիրները ՀՀ-ում նույնպես կարևորվում են, որի արդյունքում արժեթղթերի ապանյութականացման և անշարժայնացման, սեփականության նկտատմամբ իրավունքի փոխանցման արդյունավետ գրանցման, ինչպես նաև անդրսահմանային փոխանցումների և վերջնահաշվարկի իրականացման նպատակով ստեղծվեց «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն (ՀԿԴ), ինչի շնորհիվ էլ հնարավոր դարձավ միայն ապահովել օտարերկրյա ներդրումների անարգել հոսքի ապահովումը ՀՀ կապիտալի շուկա:

Դիտարկված խնդիրներն էլ կարևորվում են դեպոզիտարային ծառայությունների խորքային վերլուծության իրականացումը, ինչպես նաև ոլորտին առնչվող ռիսկերի և հնարավորությունների բացահայտումը, որը բնականաբար թերի է առանց ֆինանսական շուկայի համակողմանի ուսումնասիրության: Հետևաբար, այդ տեսանկյունից խիստ արդիական է վերլուծել նաև ՀՀ արժեթղթերի շուկայի ծավալով և գործիքակազմով պայմանավորված դեպոզիտարային ծառայությունների զարգացման

հնարավորությունները, որի իրականացման արդյունքում միայն հնարավոր կլինի տալ դեպոզիտարային ծառայությունների զարգացման հեռանկարների ճշգրիտ գնահատականը և դրանց փոխադարձ ազդեցությունը ՀՀ ֆինանսական շուկայի արդյունավետ գործողության վրա: Ահա այդ գործոններով և հանգամանքներով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ինչպես նաև գիտական հետազոտության նպատակն ու առաջադրված խնդիրները:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության կառուցվածքը հստակ է և տրամաբանական՝ բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ներկայացվել են հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, ատենախոսության գործնական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Հետազոտության առաջին՝ «Դեպոզիտարային գործունեության տեսամեթոդական հիմքերը» գլխում ատենախոսը ներկայացրել է դեպոզիտարիաների և դեպոզիտարային ծառայությունների առաջացման պատմատրամաբանական հիմքերը, ինչպես նաև դեպոզիտարային հիմնական ծառայությունների արդի դրսևորումները:

Ատենախոսության երկրորդ՝ «Դեպոզիտարային ծառայությունների զարգացման միջազգային փորձի վերլուծությունը և ՀՀ-ում դեպոզիտարային համակարգի ձևավորման առանձնահատկությունները» գլուխը նվիրված է դեպոզիտարային ծառայությունների ուսումնասիրության միջազգային փորձին, որը կատարվել է ԱՄՆ դեպոզիտար համակարգի ուսումնասիրության, Եվրոպական միության երկրներում մատուցվող դեպոզիտար ծառայությունների վերլուծության և Ռուսաստանի Դաշնությունում մատուցվող ծառայությունների առանձնահատկությունների դիտարկման միջոցով: Երկրորդ գլխում իրականացվել է նաև դեպոզիտարային

համակարգի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությունը ՀՀ-ում:

Առավել ուշադրության է արժանի աշխատանքի երրորդ՝ «ՀՀ-ում դեպոզիտարային ծառայությունների զարգացման նախադրյալները և միտումները» գլուխը, որում վերլուծվել և բացահայտվել են ՀՀ ֆինանսական շուկայի ներկա պայմաններում դեպոզիտարային ծառայությունների բարելավման կառուցակարգերը, այդ նպատակով իրականացված վիճակագրական հարցման, ինչպես նաև ֆինանսական մոդելի կառուցման միջոցով:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ձևակերպվել են տեսական և գործնական եզրահանգումները, մշակվել են համապատասխան առաջարկություններ:

Ատենախոսության բնորոշ առանձնահատկությունն այն է, որ հեղինակը կատարել է համակողմանի հետազոտություն՝ ՀՀ ֆինանսական շուկայի ներկա պայմաններում դեպոզիտարային ծառայությունների բարելավման հնարավորությունները բացահայտելու նպատակով, փորձելով ուսումնասիրության առարկան հետազոտել ինչպես դրական այնպես էլ բացասական կողմերով և կատարված հետազոտության արդյունքներով մշակել է կոնկրետ գործնական քայլերից բաղկացած հայեցակարգային մոտեցումներ, որոնք կարող են ունենալ մեծ կիրառական նշանակություն:

Ատենախոսությունում ստացված արդյունքների հավաստիությունը

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը ՀՀ արժեթղթերի շուկան է, ՀԿԴ-ն՝ իր կողմից մատուցվող դեպոզիտարային ծառայություններով հանդերձ, իսկ առարկան ՀԿԴ կողմից մատուցվող դեպոզիտարային ծառայությունների ընդլայնման և բարելավման հետ կապված հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիներն են:

Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել տարբեր հեղինակների հետառևտրային, մասնավորապես, դեպոզիտարային ծառայությունների մատուցման վերաբերյալ գիտական աշխատությունները, հրապարակումները, իրավական ակտերը և միջազգային հեղինակավոր փորձագետների ու կազմակերպությունների

հետազոտություններն ու հոդվածները, ինչպես նաև ՀՀ օրենսդրական և իրավական այլ ակտերի սահմանումներն ու դրույթները:

Հետազոտության համար մեթոդական հիմք են հանդիսացել վիճակագրական, ֆինանսական վերլուծության մեթոդները, ինչպես նաև ճանաչողության փիլիսոփայական և ընդհանուր տրամաբանական մեթոդներն ու մեթոդաբանությունը:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

- տրվել է ՀԿԴ կողմից դրամական հաշիվների վարման անհրաժեշտության և թույլատրման հիմնավորումը և բացահայտվել, որ այն էապես կնպաստի արժեթղթերով գործառնությունների ընդլայնմանը, ինչպես նաև հաճախորդներին պահառության ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանը:
- մշակվել է ՀԿԴ-ում էլեկտրոնային քվեարկության ծառայության ներդրման կառուցակարգ և հիմնավորվել, որ վերջինիս և կորպորատիվ տեղեկատվության միասնական կենտրոնի ստեղծումը և գործողությունը կբերեն ՀԿԴ-ի կողմից կորպորատիվ գործողությունների հետ կապված ծառայությունների ընդլայնմանը՝ ապահովելով ներդրողների շահերի պաշտպանվածությունը և օտարերկրյա ներդրումների ներգրավումը,
- ֆինանսական մոդելի կառուցման միջոցով մշակվել է եռակողմ ռեպո գործարքների կնքման համակարգի ներդրման կառուցակարգ և համապատասխան ելակետային տվյալների առկայության դեպքում հիմնավորվել վերջինիս ներդրման նպատակահարմարությունը և ծախսածածկումը՝ որպես ռեպո շուկայում առկա ռիսկերի զսպման և նշված ծառայության ընդլայնման ուղի,
- արժեթղթերի շուկայի որակավորված մասնակիցների միջև իրականացված հարցման միջոցով գնահատվել է T+n վերջնահաշվարկի համակարգի ներդրման անհրաժեշտությունը բորսայական առևտրում և մշակվել նշված համակարգին

աստիճանական անցման մոտեցում՝ հիմնավորելով դրա արդյունավետությունը ՀՀ արժեթղթերի շուկայի ներկայիս զարգացվածության պայմաններում:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքում դրականին առընթեր կան նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Աշխատանքում իրականացվել է ՀՀ-ում դեպոզիտարային նոր ծառայությունների ներդրման հնարավորությունների վերլուծություն, մինչդեռ կարծում ենք հետազոտությունը կշահեր, եթե հեղինակը վերլուծեր և գնահատեր արդեն իսկ ներդրված ծառայությունների՝ մասնավորապես միջազգային դեպոզիտար կապուղիների, կենսաթոշակային համակարգի հետ կապված և այլ ծառայությունների մատուցման արդյունավետությունը:

2. Առանձնահատուկ ուշադրության արժանացնելով Վճարումների և վերջնահաշվարկի համակարգերի կոմիտեի և Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության (CPSS-IOSCO) կողմից ԱԿԴ-ների գործունեության նկատմամբ սահմանված հատուկ չափանիշներին՝ կարծում ենք ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը, ի լրումն արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցմանն, ինչպես նաև արժեթղթերի վերջնահաշվարկի մորատորիումից պաշտպանվածության հետ կապված հարցերի, կատարեր նաև ՀԿԴ՝ CPSS-IOSCO սկզբունքներին համապատասխանության ընդհանուր վերլուծություն:

3. Ատենախոսությունում քննարկվում են ՀՀ-ում ռեեստրավարման և պահառության ծառայությունների միասնական մատուցման դրական կողմերը, սակայն հետազոտությունը կշահեր, եթե անդրադարձ կատարվեր նաև նման համակարգերի ռիսկերի վերլուծությանը ՀՀ-ում:

4. Կարևորելով շամանակակից ինտեգրացիոն գործընթացները և այն, որ ՀՀ-ն ԵԱՏՄ անդամ է, մեր կարծիքով, ճիշտ կլիներ ատենախոսության շրջանկներում հետազոտվեին նաև Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի և դեպոզիտարային ծառայությունների զարգացման հեռանկարները և ՀՀ-ում իրականացվող դեպոզիտարային ծառայությունները գնահատվեին ԵԱՏՄ անդամակցության պայմաններում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողություններն էականորեն չեն ազդում ատենախոսության դրական արժանիքների և ընդհանուր գնահատականի վրա:

Հասմիկ Աշոտի Սալնազարյանի թեկնածուական ատենախոսությունը կարելի է գնահատել որպես ինքնուրույն և ամբողջական գիտական հետազոտություն, որտեղ դրվել և որոշակի լուծում են ստացել ՀՀ-ում դեպոզիտարային ծառայությունների բարելավմանն ուղղված մի շարք կարևոր խնդիրներ:

Ատենախոսության հիմնական արդյունքները և քննարկված հիմնախնդիրները արտացոլված են ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված հրատարակություններում հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում: Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ամփոփելով, պետք է նշել, որ Հասմիկ Աշոտի Սալնազարյանի «Դեպոզիտարային ծառայությունների զարգացման ուղիները ՀՀ ֆինանսական շուկայում (Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի նյութերով)» թեմայով ատենախոսությունը, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Գ.Մնացականյան

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հ.Գ.Մնացականյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար, պ.գ.դ. Լ.Ս.Հովսեփյան

07.02.2020թ.